

Նպատակ 8: Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար

Աշխարհի բնակչության մոտ կեսը դեռևս ապրում է օրական մոտ 2 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով: Եվ չափազանց շատ վայրերում աշխատանք ունենալը չի երաշխավորում աղքատությունից խուսափում: Այս դանդաղ և անհավասար առաջընթացը մեզնից պահանջում է վերանայել և արդիացնել աղքատության վերացմանն ողղված մեր տնտեսական ու սոցիալական քաղաքականությունները:

Արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների շարունակվող բացակայությունը, ոչ բավարար ներդրումները և թերսպառումը հանգեցնում են հիմնական հանրային պայմանագրի խափանման, մինչդեռ դա է ընկած ժողովրդավարական հասարակությունների հիմքում՝ որ բոլորը պետք է մաս ունենան առաջընթացից: 2015 թ.-ից հետո որակյալ աշխատանքի ստեղծումը շարունակում է մնալ գրեթե բոլոր տնտեսությունների հիմնական մարտահրավերը:

Կայուն տնտեսական աճը հասարակություններից կպահանջի ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք մարդկանց թույլ կտան ունենալ որակյալ աշխատանք, որը խթանում է տնտեսությունը՝ առանց վնասելու շրջակա միջավայրը: Աշխատանքի հնարավորությունները և արժանապատիվ աշխատանքային պայմանները նույնպես անհրաժեշտ են աշխատանքային տարիքի ողջ բնակչության համար:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

30 մլն՝ սա ամեն տարի աշխատաշուկա մտնող նորեկների համար պահանջվող աշխատատեղերի քանակն է, որպեսզի հնարավոր լինի հետ չմնալ աշխարհում աշխատանքային տարիքի բնակչության աճից:

Ո՞րն է նպատակը

Խթանել համապարփակ և կայուն տնտեսական աճ, զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար:

Ինչո՞ւ

Աղթատության վերացումը հնարավոր է միայն կայուն և լավ վարձատրվող աշխատանքի շնորհիվ: Մոտ 2,2 մլրդ մարդ ապրում է աղթատության շեմից (2 ԱՄՆ դոլար) ցածր:

Որքա՞ն գործազուրկ մարդ կա

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության 2015 թ. տվյալների՝ ավելի քան 204 մլն մարդ գործազուրկ է:

Համաշխարհային գործազրկությունն ավելացել է՝ 2007 թ. 170 մլն մարդուց 2012 թ. հասնելով 202 միլիոնի, որից մոտ 75 միլիոնը երիտասարդ կանայք և տղամարդիկ են:

Որքա՞ն աշխատատեղ է անհրաժեշտ

2016-2030 թթ. աշխատաշուկա մտնող նորեկների համար անհրաժեշտ է 470 մլն աշխատատեղ՝ հետ չմնալու աշխատանքային տարիքի համաշխարհային բնակչության աճից: Դա կազմում է տարեկան շուրջ 30 մլն աշխատատեղ:

Եվ այսպես՝ եթե բոլորն աշխատանք ունենան, արդյո՞ք կվերանա ծայրահեղ աղթատությունը

Աշխատատեղեր ստեղծելուց բացի, անհրաժեշտ է նաև բարելավել պայմանները շուրջ 780 մլն կանանց և տղամարդկանց համար, որոնք աշխատում են, սակայն չեն վաստակում այնքան, որ կարողանան իրենց և իրենց ընտանիքներին դուրս բերել աղթատությունից:

Բացի այդ, կանանց և աղջիկների համար աշխատանքում պետք է հասանելի լինեն տղամարդկանց և տղաների հնարավորություններին հավասար հնարավորություններ:

Ես ունեմ աշխատանք: Ինչո՞ւ այս խնդիրը պետք է մտահոգի ինձ.

Հասարակությունը՝ որպես մեկ ամբողջություն, օգտվում է, երբ ավելի շատ մարդիկ են լինում արդյունավետ և նպաստում իրենց երկրի աճին: Արդյունավետ զբաղվածությունը և արժանապատիվ աշխատանքը արդար գլոբալացման ու աղթատության հաղթահարման հասնելու կարևորագույն տարրերն են: Բացի այդ, չհաղթահարվելու դեպքում, գործազրկության խնդիրը կարող է հանգեցնել խռովությունների և խաթարել խաղաղությանը:

Ի՞նչ է նշանակում «արժանապատիվ աշխատանք»

«Արժանապատիվ աշխատանք» նշանակում է, որ բոլորը հնարավորություն ունենան ստանալու աշխատանք, որն արդյունավետ է ու ապահովում է արդար եկամուտ, անվտանգություն աշխատավայրում և սոցիալական պաշտպանություն ընտանիքների համար, անձնական զարգացման և սոցիալական ինտեգրման ավելի լավ հեռանկարներ:

Կարևոր է նաև, որ աշխատավայրում բոլոր կանանց և տղամարդկանց տրվեն հավասար հնարավորություններ:

Արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների շարունակական բացակայությունը, ոչ բավարար ներդրումները և թերսպառումը հանգեցնում են հիմնական հանրային պայմանագրի խափանման, մինչդեռ դա է ընկած ժողովրդավարական հասարակությունների հիմքում՝ որ բոլորը պետք է մաս ունենան առաջընթացից:

Ի՞նչ կարող ենք անել այս խնդիրները լուծելու համար

Երիտասարդների համար արժանապատիվ աշխատանքի անցնելու լավագույն հնարավորություններ ապահովելը պահանջում է ներդրումներ հնարավոր ամենաբարձր որակի կրթության և վերապատրաստման մեջ, որպեսզի երիտասարդներն ապահովված լինեն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտություններով, ինչը նրանց համար հասանելի կդարձնի սոցիալական պաշտպանությունն ու հիմնական ծառայությունները՝ անկախ պայմանագրի տեսակից, ինչպես նաև խաղաղաշտի այնպիսի հարթեցում, որ բոլոր նպատակասլաց երիտասարդները կարողանան ձեռք բերել արդյունավետ զբաղվածություն՝ անկախ իրենց սեռից, եկամտի մակարդակից կամ սոցիալ-տնտեսական կարգավիճակից:

Կառավարությունները կարող են ձգտել ստեղծելու ակտիվ, կայուն, նորարարական և մարդակենտրոն տնտեսություններ՝ խթանելով երիտասարդների զբաղվածությունն ու կանանց տնտեսական զորացումը, մասնավորապես՝ արժանապատիվ աշխատանքը բոլորի համար:

Իշխանության տեղական մարմիններն ու համայնքները կարող են նորացնել և նախագծել իրենց քաղաքները և մարդկանց բնակավայրերն այնպես, որ խթանեն համայնքների համախմբվածությունն ու անձնական անվտանգությունը և խրախուսեն նորարարությունն և զբաղվածությունը:

Կայուն զարգացման նպատակների և 8-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով՝

<http://www.un.org/sustainabledevelopment>